«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարաի ռեկտոր,

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Ա. Վ. Գրիգորյան

«24» հունիսի 2026 թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Արմեն Աքիլեսի Մարտիրոսյանի Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Սոցիո-մշակութային գործոնի կառավարման հիմնահարցերը կայուն զարգացման նպատակների համատեքստում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը քննարկվել է ՀՊՏՀ Տնտեսագիտության ֆակուլտետի Կիրառական տնտեսագիտության ամբիոնի 2026 թվականի հունիսի 23-ին կայացած նիստում: Նիստին ներկա էին Կիրառական տնտեսագիտության ամբիոնի վարիչ տ.գ.դ., պրոֆեսոր Թ. Մ. Մկրտչյանը (նախագահող), տ.գ.թ., դոցենտներ՝ Գ.Ավագյանը, Ծ.Կարապետյանը, Ք.Վարդանյանը, Ռ.Ղանթարչյանը, Ա.Հակոբյանը, Ա.Սարգսյանը, Ա.Առաքելյանը, Ֆ.Բահարյանը, Մ.Մինասյանը, Կ.Գրիգորյանը, տ.գ.թ. ավագ դասախոսներ՝ Գ.Խաչատրյանը, Ն.Կարապետյանը, դասախոսներ Մ.Ղարագյոզյանը, Ա.Միրումյանը, Ա.Մարգարյանը, Դ.Գևորգյանը:

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Ատենախոսության թեման արդիական է և կարևոր՝ պայմանավորված Կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ) համատեքստում սոցիո-մշակութային գործոնների հաշվառման, տնտեսական աճի ավանդական մոդելների վերանայման, ինչպես նաև պետական կառավարման համակարգում մշակութային-ինստիտուցիոնալ միջավայրի դերի շարունակական աճով: Ժամանակակից պայմաններում կայուն զարգացման ռազմավարությունների իրագործումը ենթարկվում է բազմաբնույթ ռիսկերի՝

ինստիտուցիոնալ, արժեքային և մշակութային, ինչի արդյունքում արդյունավետ պետական կառավարման և սոցիո-մշակութային միջավայրի թիրախային կարգավորման համակարգերի ձևավորումը դառնում է առաջնային խնդիր:

Ատենախոսությունում հիմնավորված է, որ կայուն զարգացման օրակարգի ընդունումից տասը տարի անց թիրախների միայն 17%-ն է գտնվում ժամանակին իրագործման հետագծում, իսկ զարգացող երկրներում ֆինանսավորման տարեկան դեֆիցիտը կազմում է շուրջ 4 տրիլիոն դոլար, ինչը փաստում է, որ միայն ֆինանսական ռեսուրսների ներարկումը չի ապահովում ցանկալի արդյունք: Այս համատեքստում առանձնահատուկ կարևորություն ունի սոցիո-մշակութային կոդերի և արժեքային համակարգերի դերի ուսումնասիրությունը, քանի որ էկոլոգիական և թվային ենթակառուցվածքներում կատարվող միատեսակ ներդրումները տարբեր երկրներում տալիս են սկզբունքորեն տարբեր արդյունքներ՝ կախված տվյալ երկրի մշակույթի բնույթից, անորոշության հանդեպ վերաբերմունքից և հասարակական վստահության մակարդակից: Ատենախոսությունում ցույց է տրված, որ սոցիո-մշակութային միջավայրը պետք է հանդես գա ոչ թե որպես զարգացման արտաքին պասիվ ֆոն, այլ որպես պետական կառավարման անմիջական և ակտիվ օբյեկտ:

Ատենախոսությունն ունի ինչպես տեսական, այնպես էլ կիրառական նշանակություն և կարող է օգտակար լինել պետական կառավարման մարմինների, ռազմավարական պլանավորման ստորաբաժանումների և կայուն զարգացման ոլորտի քաղաքականություն մշակող մասնագետների համար: Ատենախոսության տեսական և գործնական արդյունքները հիմք են հանդիսանում տնտեսագիտության, կիբեռնետիկայի և մշակույթի հետազոտությունների միջև եղած կիրառական բացը լրացնելու, պետության կողմից տարբեր քաղաքական սցենարներ արդյունավետ համեմատելու և բյուջեի միջոցները ճիշտ առաջնահերթություններով բաշխելու համար:

Հետազոտության նպատակներն ու խնդիրները

Ատենախոսության նպատակն է մշակել տեսամեթոդաբանական մոտեցումներ և գործնական գործիքներ՝ սոցիո-մշակութային գործոններով կառավարման համար՝ կայուն զարգացման նպատակների իրագործման համատեքստում, որոնք պիտանի կլինեն

պետական տնտեսական պլանավորման մեջ կիրառելու համար և կունենան գործնական փորձարկում Հայաստանի Հանրապետության օրինակով:

Նպատակին հասնելու համար առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- Համակարգել մշակութային-ինստիտուցիոնալ միջավայրի դերի բացահայտման մոտեցումները կայուն զարգացման գործում և ձևակերպել կառավարելիության միասնական պայման, որը միավորում է Էշբիի կիբեռնետիկան, Մոկիրի գիտելիքի աճի տեսությունը, Նորտ-Աջեմօղլու-Աուզանի ինստիտուցիոնալ տնտեսագիտությունը և Հոֆստեդեի ու Շվարցի չափումները,
- Իրականացնել մշակութային գործոնների ազդեցության բազմակողմանի վերլուծություն ԿԶՆ-ների բնապահպանական բաղադրիչի վրա՝ Հոֆստեդեի և Շվարցի մոդելների, սոցիալական վստահության ցուցանիշների և Ժուրավլյովի դիսկրետ դասակարգման ալգորիթմի համատեղ կիրառմամբ՝ հնարավոր առավելագույն թվով երկրների ընտրանքի հիման վրա,
- Բացահայտել երկրների թվային պատրաստվածության քանակական կախվածությունը մշակութային պորտֆելից և գնահատել մշակութային չափումների միջնորդավորված դերը «թվայինացում – կայուն զարգացում» փոխկապակցության մեջ,
- Իրականացնել անհրաժեշտ բազմազանության օրենքի անհավասարության պայմանի քանակական ստուգումը որպես սոցիալ-տնտեսական համակարգերի կառավարելիության ախտորոշիչ չափանիշ,
- Մշակել մշակութածնության և կրթական աղքատության կառավարման դինամիկ տնտեսագիտամաթեմատիկական մոդելները Հայաստանի Հանրապետության նյութերի հիման վրա՝ օպտիմալ կառավարման տեսության ապարատի կիրառմամբ,
- Ձևակերպել գործնական առաջարկություններ ՀՀ կայուն զարգացման պետական քաղաքականության համար՝ քանակական թիրախային ուղենիշներով և բյուջետային ծախսերի առաջնահերթությունների որոշմամբ:

Հետազոտության օբյեկտը և առարկան

Հետազոտության օբյեկտը երկրների սոցիալ-տնտեսական համակարգերն են՝ որպես կառավարման օբյեկտ ԿԶՆ-ների իրականացման գործընթացում, դիտարկված ինստիտուտների, գիտելիքի և մշակույթի միասնության մեջ:

Հետազոտության առարկան մշակութային -ինստիտուցիոնալ միջավայրի քանակական գնահատման և սոցիոմշակութային գործոնների կառավարման օրինաչափություններն ու մեխանիզմներն են ԿԶՆ-ների իրականացման համար:

Հիմնական գիտական արդյունքները և հետազոտության նորույթը

Ատենախոսության ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում առանձնացվել են հետևյալ գիտական նորույթները.

- Սոցիո-մշակութային գործոնները որակապես նկարագրվող արտաքին համատեքստից կերպափոխվել են պետական տնտեսական քաղաքականության կառավարելի օբյեկտի: Մշակվել է կառավարման գործիքակազմ, որը ներառում է՝ կառավարելիության պայմանը, դրա բաղադրիչների քանակական գնահատման մեթոդաբանությունը, մշակութային բարենպաստության ինդեքսը և օպտիմալ կառավարման դինամիկ մոդելները: Վերջիններս թույլ են տալիս տարբերակել ԿԶՆ-ների իրականացման սահմանափակիչ և ռեսուրս հանդիսացող մշակութային-ինստիտուցիոնալ բնութագրերը, դրանց հիման վրա որոշելով կառավարման ներգործությունների ու բյուջետային ծախսերի առաջնահերթությունները:
- Մշակվել է սոցիալ-տնտեսական համակարգերի կառավարելիության բացահայտման միասնական մոտեցում ԿԶՆ-ների իրականացման գործընթացում, որը մեկ ֆորմալ կառուցվածքում միահյուսում է ինստիտուցիոնալ տնտեսագիտության, գիտելիքի աճի տեսության, կիբեռնետիկայի և մշակութային չափումների նախկինում ինքնուրույն հանդես եկող ավանդույթները և հասցված է գործնական չափման մակարդակի՝ դրա բաղադրիչների կտրվածքով ամբողջական քանակական գնահատման մեթոդաբանության շնորհիվ՝ միջազգային բաց տվյալների բազաների նյութի հիման վրա:
- Իրականացվել է մշակութային գործոնների ազդեցության բազմակողմանի փորձագիտական վերլուծություն ԿԶՆ-ների բնապահպանական բաղադրիչի համար՝ 55 երկրի և 25 փոփոխականի հիման վրա՝ ըստ Հոֆստեդեի, Շվարցի մոդելների և վստահության ցուցանիշների:
- Բացահայտվել և գնահատվել են երկրների թվայնացման պատրաստվածության մշակութային որոշիչները. ցույց է տրվել, որ անհապաշտությունը, իշխանության ցածր

հեռադրությունը և անորոշության նկատմամբ հանդուրժողականությունը վիճակագրորեն նշանակալի կանխատեսում են ցանցային պատրաստվածության ինդեքսը, իսկ մշակութային պրոֆիլը հանդես է գալիս որպես թվային ներդրումների արդյունավետության ցուցիչ՝ ԿԶՆ9, ԿԶՆ17 հասանելիության գործընթացում:

- Մշակվել են մշակութածնության և կրթական աղքատության օպտիմալ կառավարման մոդելները՝ փորձագիտորեն ստուգված դիտարկվող երկրների այդ թվում Հայաստանի Հանրապետության տվյալների հիման վրա: Կրթական աղքատության մոդելը չափաբերվել է ավելի վաղ փաստացի արժեքի վրա և հաստատվել հետագա փաստացի տվյալներով:

Հետազոտության ծավալը և կառուցվածքը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից (285 անվանում) և հավելվածներից: Ատենախոսությունը շարադրված է 164 էջի վրա՝ առանց հավելվածների, և պարունակում է 20 աղյուսակ, 3 գծապատկեր, 23 նկար, 1 սխեմա:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ներածության մեջ հիմնավորվում է ատենախոսության թեմայի արդիականությունը, ձևակերպվում են հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտն ու առարկան, տեսական, մեթոդական և տեղեկատվական հիմքերը, սահմանվում են աշխատանքի արդյունքների գիտական նորույթը և գործնական նշանակությունը, ինչպես նաև ներկայացվում է հետազոտության արդյունքների գործնական անհրաժեշտությունը:

Ատենախոսության առաջին՝ **«Սոցիո-մշակութային գործոնների կառավարման տեսական հիմքերը կայուն զարգացման համատեքստում»** գլխում բացահայտվում է հետազոտության տեսական հիմքի ձևավորումը՝ չորս առանձին զարգացող գիտական ուղղությունների՝ ինստիտուցիոնալ տնտեսագիտության, գիտելիքի աճի տեսության, կառավարման կիբերնետիկայի և մշակութային չափումների տեսության համադրման միջոցով: Համակողմանիորեն անդրադարձ է կատարվել կայուն զարգացման հայեցակարգի էվոլյուցիային, մատնանշելով, որ ԿԶՆ-ների իրականացման ընթացքը ոչ

գծային է և ունի միջերկրային զգալի տարբերություններ, որոնք լիարժեք չեն բացատրվում տնտեսական ռեսուրսների ծավալով: Ներկայացվել է սոցիո-մշակութային գործոնների դերի ընկալումը, նշելով, որ այն ունի խորը պատմական արմատներ, ինչը հիմնավորում է դրա ժամանակակից ֆորմալացման անհրաժեշտությունը: Գլխի վերջում ձևակերպվում է կառավարելիության միասնական պայմանը, ինչպես նաև կառավարելիության դեֆիցիտի հասկացությունը՝ որպես վիճակ, երբ ինստիտուտների և օգտագործվող գիտելիքի համակցված հզորությունն անբավարար է ԿՀՆ-ների առաջադրած խնդիրների բազմազանությունը ծածկելու համար:

Ատենախոսության երկրորդ՝ **«Սոցիո-մշակութային գործոնների՝ կայուն զարգացման վրա ազդեցության վերլուծություն»** գլխում կատարվել է առաջին գլխում ձևակերպված տեսական դրույթների էմպիրիկ ստուգում: Մասնավորապես Հոֆստեդեի մշակութային չափումները ցույց են տալիս կայուն վիճակագրական կապ կայուն զարգացման նպատակների ինդեքսի հետ, ինչը հաստատում է մշակութային գործոնների առանցքային դերը զարգացման հետագծերի ձևավորման գործում: Բացի այդ, Ժուրավլյովի ալգորիթմի կիրառումը վեր է հանել կրոնական և լեզվական գործոնների զգալի բացատրական ուժը տեղեկատվական բովանդակության գնահատման համար: Շվարցի արժեքների մոդելի հիման վրա իրականացված Եվրասիական տարածաշրջանի մշակութային բազմազանության քանակական վերլուծությունը նույնականացրել է չորս կայուն կլաստերներ, որոնք ունեն կայուն զարգացման նպատակների իրագործման տարբեր մոդելներ: Այս համատեքստում ամենաուժեղ դրական կապը ԿՀՆ ինդեքսի հետ դրսևորում են ինքնավարության և ունիվերսալիզմի արժեքները: Վերջում, անդրադարձ է կատարվում նաև ՀՀ-ին՝ ծննդյան պահին սեռերի խաթարված հարաբերակցության վերլուծությունը ցույց է տալիս, որ գենդերային նախապատվությունները խորը արմատներ ունեն մշակութային նորմերում, ինչը հանգեցնում է այդ նորմերի փոփոխմանն ուղղված համալիր ու երկարաժամկետ միջոցառումների կիրառման անհրաժեշտությանը:

Ատենախոսության երրորդ՝ **«Սոցիո-մշակութային գործոնների կառավարման մոդելների փորձարարական ապրոբացիա և վերլուծության արդյունքներ»** գլխում մշակվել է վեց դիֆերենցիալ հավասարումների համակարգ, որն առաջին անգամ ներառում է մշակութային աղտոտվածության հայեցակարգը: Մոդելի օպտիմալ լուծումը ցույց է տալիս, որ կրթական թիրախներին հասնելու համար անհրաժեշտ է մշակութային

ենթակառուցվածքների և կրթության ֆինանսավորումն ավելացնել 35-42%-ով: Միաժամանակ, կառուցվել է ուսումնական աղքատության մինիմալացման դինամիկ մոդել (ութ ոչ գծային հավասարումներով), որը հաշվի է առնում ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության կապը: Գլխում նաև սինթեզվել են Էշբի-Գավրիլեցի կիբեռնետիկական օրենքն ու Մոկիրի գիտելիքի աճի տեսությունը: 133 երկրների տվյալներով կատարված էմպիրիկ ստուգումը հաստատել է, որ այս պայմանին բավարարող պետությունները ցուցաբերում են կայուն զարգացման զգալիորեն ավելի բարձր արդյունքներ: Այս մոտեցումների փորձարկումը Հայաստանի օրինակով վեր է հանել զարգացման մշակութային արգելքներ՝ իշխանության բարձր հեռավորությունն ու անորոշությունից խուսափումը: Որպես քաղաքականության առաջնահերթություն սահմանվել են նախադպրոցական կրթությունը, գրադարանները և գենդերային անհավասարության կրճատումը: Արդյունքում ձևակերպվել են գործնական երաշխավորություններ՝ հիմնված մշակութային ադապտացիայի, բազմաչափ ռազմավարությունների և երկարաժամկետ պլանավորման սկզբունքների վրա:

Աշխատանքի արդյունքների հիման վրա ներկայացվում են համապատասխան եզրակացություններ և առաջարկություններ:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

1. Ատենախոսության առաջին գլխում հիմնավորվում է, որ ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ) արդյունավետ իրականացումը պահանջում է դրանց ադապտացում ազգային առանձնահատկություններին և սոցիալ-մշակութային համատեքստին, սակայն օտարերկրյա ինստիտուցիոնալ մոդելների մեխանիկական փոխառումը՝ առանց տեղական պայմանների հաշվառման, կարող է հանգեցնել կառավարման և զարգացման գործընթացներում դիսֆունկցիաների: Միաժամանակ, հետազոտության մեջ ընդգծվում է, որ սոցիո-մշակութային գործոնները (լեզու, կրոն, պատմական հիշողություն, արժեքային համակարգ և այլն) բնութագրվում են բարձր իներցիոնությամբ և փոփոխվում են հիմնականում երկարաժամկետ, սերնդափոխական ժամանակահատվածներում: Այս առումով կարելի է նկատել, որ ատենախոսության շրջանակներում ուսումնասիրված ժամանակային հորիզոնը համեմատաբար սահմանափակ է նման բնույթի գործոնների էական փոփոխությունները և դրանց տնտեսական հետևանքները լիարժեք բացահայտելու համար: Հետևաբար, սոցիո-

մշակութային գործոնների ազդեցության գնահատման արդյունքները կարող էին առավել հիմնավորված լինել ավելի երկարաժամկետ դիտարկումների և դինամիկ վերլուծության կիրառման դեպքում:

2. Աշխատանքում ներկայացված կառավարման արդյունավետության գնահատման մոդելը հիմնված է մի շարք տեսական և էմպիրիկ ցուցանիշների համակցման վրա, սակայն ստացված արդյունքների հավաստիությունը զգալիորեն պայմանավորված է կիրառված ցուցանիշների ընտրությամբ, մուտքային տվյալների որակով և սոցիո-մշակութային գործոնների չափման մեթոդաբանությամբ: Միաժամանակ, մոդելը սահմանափակ չափով է հաշվի առնում արտաքին և ներքին միջավայրի այնպիսի դժվար կանխատեսելի ազդեցությունները, ինչպիսիք են քաղաքական անկայունությունը, տնտեսական ճգնաժամերը, աշխարհաքաղաքական զարգացումները և այլ արտաքին շոկերը, որոնք կարող են էականորեն ազդել կառավարման համակարգի արդյունավետության և կանխատեսվող արդյունքների իրականացման վրա:

3. Աշխատանքում կարծես թե առկա է կոռելյացիոն կապերը պատճառա-հետևանքային կապերի հետ նույնացնելու ռիսկ: Մասնավորապես, պնդումը, թե լեզվա-կան կառուցվածքները կամ կրոնական հայացքներն ուղղակիորեն ազդում են կայուն զարգացման նպատակների իրագործման վրա, պահանջում է էնդոգենության խնդրի խորը վերլուծություն: Հնարավոր է, որ տնտեսական բարձր զարգացվածությունն ու ինստիտուտների որակն են փոխում հասարակության վերաբերմունքը մշակութային կամ կրոնական նորմերի նկատմամբ, այլ ոչ թե հակառակը: Մշակույթը ոչ թե անկախ պատճառ է, այլ նաև տնտեսական գործընթացների հետևանք: Կարծում ենք, որ մշակույթ - կայուն զարգացում միակողմանի ազդեցություն դիտարկումը, խոցելի է, քանի որ անտեսում է տնտեսության ու ինստիտուտների՝ մշակույթը տրանսֆորմացնելու, կանխորոշելու ներուժը:

4. Ատենախոսը իրականացրել է ՀՀ-ում կրթական աղքատության զգայունության վերլուծություն եզրահանգելով, որ ամենաազդեցիկ կառավարող ներգործությունը նախադպրոցական ընդգրկվածության ընդլայնումն է, ինչը որոշում է կրթական բյուջետային ծախսերի առաջնահերթ ուղղությունը: Չժխտելով դրա կարևորությունը, փաստենք, որ նախադպրոցական կրթությունը չի կարող չեզոքացնել

տնային աղքատության ազդեցությունը: Եթե երեխան ապրում է սոցիալապես անապահով միջավայրում, մշտապես բախվում է սննդամթերքի պակասի իրողությանը, ընտանիքում բացակայում է կրթվելու մշակույթը, ապա օրական մի քանի ժամ մանկապարտեզ հաճախելը բավարար չէ կրթական աղքատությունից դուրս գալու համար: Մյուս կողմից, հատկապես գյուղական համայնքներում նախադպրոցական ցանցի ընդլայնումը բախվում է տեղական ինստիտուտների ցածր կարողությունների խնդրին: Այս առումով լուծումը կարծում ենք պետական համապարփակ ներգործությունը պետք է լինի:

5. Աշխատանքի առանձին գլուխների վերջում ներկայացված ընդգրկուն ամփոփումների և թեզի «Եզրակացություններ» բաժնի միջև առկա է որոշակի կառուցվածքային-բովանդակային անհամապատասխանություն: Վերջնական եզրակացությունների մի մասը կրում է զուտ նկարագրական բնույթ՝ սահմանափակվելով կատարված հետազոտական քայլերի արձանագրմամբ, փոխարենը ներկայացնելու ստացված արդյունքների գիտական արժեքն ու տեսական ընդհանրացումները: Բացի այդ, «Եզրակացություններ» բաժնում ներկայացված առաջարկությունները հասցեական չեն, ինչը նվազեցնում է դրանց կիրառական նշանակությունը:

«ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ»

Արմեն Աքիլեսի Մարտիրոսյանի «Սոցիո-մշակութային գործոնի կառավարման հիմնահարցերը կայուն զարգացման նպատակների համատեքստում» թեմայով ատենախոսությունն ինքնուրույն, գիտական արժեք ունեցող և ամփոփ հետազոտություն է, որով ստացված արդյունքները կարող են նպաստել սոցիալ-մշակութային գործոնների կառավարելիության բարելավմանը՝ ՀՀ կայուն զարգացման գործում:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի տպագրված 11 գիտական հոդվածներում, այդ թվում Scopus և Web of Science համակարգերում ինդեքսավորված հանդեսներում:

Սեղմագիրը կազմված է ՀՀ ԲԿԳԿ-ի պահանջներով և համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը, արտացոլում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, **«Սոցիո-մշակութային գործոնի կառավարման հիմնահարցերը կայուն զարգացման նպատակների համատեքստում»** թեմայով պաշտպանության ներկայացված ատենախոսությունը բավարարում է Ը.00.02–«Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություններին «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման» 6-րդ և 7-րդ կետերի և ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ հեղինակը՝ Ա. Մարտիրոսյանն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՀՊՏՀ Կիրառական տնտեսագիտության ամբիոնի

վարիչ տ. գ. դ., պրոֆեսոր՝ **Թ. Մ. Մկրտչյան**

ՀՊՏՀ Կիրառական տնտեսագիտության ամբիոնի

դոցենտ, տ.գ.թ.՝ **Գ. Ա. Ավագյան**

ՀՊՏՀ Կիրառական տնտեսագիտության ամբիոնի

դոցենտ, տ.գ.թ.՝ **Ֆ. Ֆ. Բահարյան**

Թ. Մ. Մկրտչյանի, Ֆ. Ֆ. Բահարյանի և Գ. Ա. Ավագյանի ստորագրությունները հաստատում եմ՝

ՀՊՏՀ գիտական քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

24.06.2026